Արձանագրություն N 4

***Պետության կարիքների համար համակարգչային տոմոգրաֆիայի սարքերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի***

ք. Երևան

«11» «Հոկտեմբերի» 2024թ.
ժամը 17:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Ա. Բաբայան |
| Հանձնաժողովի անդամներ | Վ.Վահանյան, Ա.Գևորգյան, Հ.Խուրշուդյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ. Սարգսյան |

***1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

***(Ա. Բաբայան)***

Ընդունել ի գիտություն, որ 20.09.24թ. հրապարակվել է հրավեր ARMEPS համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2024 թվականի հոկտեմբերի 7-ին, ժամը 15:00-ին: 2024 թվականի հոկտեմբերի 7-ին ժամը 15:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ | armedtechnicallc@gmail.com | 02604367 |
| 2 | «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ | tender@theopharma.am | 00471216 |
| 3 | «Դիավանտ» ՍՊԸ | lawyer@diavant.am | 00255375 |
| 4 | «Ս.Ա.Վ. Գրուպ» ՍՊԸ | savgrouptender@gmail.com | 07616781 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

***2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին***

---

***(Ա. Բաբայան)***

Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն, ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

***3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

---

***(Ա. Բաբայան)***

Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին ոչ համապատասխան և ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը 08.10.2024թ. որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը և հնարավորություն

տալ շտկել մասնակիցներին առձանագրված անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի քարտուղարը ARMEPS համակարգի միջոցով 08.10.2024թ. ծանուցել է մասնակիցներին շտկման մասին: Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված շտկման ծանուցումները՝ ըստ մասնակիցների.

**«Ար Մեդտեխնիկա» ՍՊԸ**

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը) մասնավորապես՝ 1-ին չափաբաժնի համար ներկայացված երկու մոդելների ապրանքների համար նշել հստակ տեխնիկական բնութագրերի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Երկու մոդելների համար նշել հստակ երաշխիքային ժամկետները, ինչպես նաև որակի վկայականները, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել ապրանքի նոր, չօգտագործված լինելու հանգամանքը, բացառելով տեխնիկական բնութագրում «պետք է լինի» բառակապակցությունը: Շտկված հստակեցված տարբերակները սահմանված ժամկետում պետք է ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված՝ hsargsyan@moh.am էլեկտրոնային հասցեին մինչև 09.10.2024թ. ժամը 23:59-ն: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 80-80-03 հեռախոսահամարին՝ ներքին (1804):

**«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ**

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ տեխնիկական բնութագրում հրավերով պահանջվել են որակի վկայականներ: Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում հստակ նշված են միայն 1. ISO13485, 2. ISO9001, 3. ISO14001 որակի վկայականների առկայության մասին, իսկ հրավերով պահանջվող երկու մյուս որակի վկայականները ներկայացված են «կամ համարժեք», «և/կամ» արտահայտություններով՝ 4. ISO14971 կամ համարժեք (21 CFR Part 820 in FDA), 5. CE Mark (Directive 93/42/EEC) և/կամ FDA: Անհրաժեշտ է ներկայացնել շտկված տեխնիկական բնութագիրը՝ մասնավորապես շտկել և հստակ ներկայացվնել 4 և 5 համարներով ներկայացված որակի վկայականները՝ բացառելով «կամ», «համարժեք», «և/կամ» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Շտկված հստակեցված տարբերակը սահմանված ժամկետում պետք է ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված՝ hsargsyan@moh.am

էլեկտրոնային հասցեին մինչև 09.10.2024թ. ժամը 23:59-ն: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 80-80-03 հեռախոսահամարին՝ ներքին (1804):

**«Դիավանտ» ՍՊԸ**

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ շտկել ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մոդելը և արտադրողի անվանումը նշել հստակ՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև ապրանքի ամբողջական նկարագրում (տեխնիկական բնութագրում) շտկել բոլոր տեխնիկական չափանիշները՝ բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Հստակ նշել երաշխիքային ժամկետը, ինչպես նաև որակի վկայականները, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: ինչպես նաև հստակեցնել ապրանքի նոր, չօգտագործված լինելու հանգամանքը, բացառելով տեխնիկական բնութագրում «պետք է լինի» բառակապակցությունը: Շտկված հստակեցված տարբերակները սահմանված ժամկետում պետք է ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված՝ hsargsyan@moh.am էլեկտրոնային հասցեին մինչև 09.10.2024թ. ժամը 23:59-ն: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 80-80-03 հեռախոսահամարին՝ ներքին (1804):

**«Ս.Ա.Վ. Գրուպ» ՍՊԸ**

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ շտկել ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մոդելը և արտադրողի անվանումը նշել հստակ՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև ապրանքի ամբողջական նկարագրում (տեխնիկական բնութագրում) շտկել բոլոր տեխնիկական չափանիշները՝ բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Հստակ նշել երաշխիքային ժամկետը, ինչպես նաև որակի վկայականները, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: ինչպես նաև հստակեցնել ապրանքի նոր, չօգտագործված լինելու հանգամանքը, բացառելով տեխնիկական բնութագրում «պետք է լինի» բառակապակցությունը: Շտկված հստակեցված տարբերակները սահմանված ժամկետում պետք է

ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված՝ hsargsyan@moh.am էլեկտրոնային հասցեին մինչև 09.10.2024թ. ժամը 23:59-ն: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 80-80-03 հեռախոսահամարին՝ ներքին (1804):

Գնահատող հանձնաժողովը որոշել էր առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի գնահատումը լիարժեք իրականացնելու համար, բոլոր մասնակիցներին առաջարկել ներկայացնել նաև իրենց կողմից առաջարկվող ապրանքների որակի վկայականները և նույն օրը՝ 08.10.2024թ. գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված՝ hsargsyan@moh.am էլեկտրոնային հասցեից բոլոր մասնակիցների էլեկտրոնային հասցեներին ներկայացվել է հետևյալ գրությունը՝

**«Հարգելի գործընկեր:**

Ի լրումն ARMEPS համակարգով «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտի շտկման պահանջի, խնդրում եմ մինչև 11.10.2024թ. ժամը 18:00 hsargsyan@moh.am էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնել նաև Ձեր կողմից առաջարկվող ապրանքի՝ հրավերով պահանջվող և Ձեր կողմից ներկայացված բոլոր որակի վկայականների սքանավորված պատճենները՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի գնահատումը լիարժեք իրականացնելու համար:»:

Սահմանված ժամկետներում բոլոր ծանուցված մասնակիցները գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված՝ hsargsyan@moh.am էլեկտրոնային հասցեին ներկայացրել են և պահանջվող շտկումները և իրենց կողմից առաջարկվող ապրանքների որակի վկայականները:

**Որոշվեց.** Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի պահանջները՝ բոլոր շտկումներ և պահանջվող որակի վկայականներ ներկայացրած մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

### *4. Մասնակիցների առաջարկած գների մասին*

---

***(Ա. Բաբայան)***

07.10.2024թ. հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հետո մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

### *5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին*

---

***(Ա. Բաբայան)***

25.09.2024թ. հրավերի վերաբերյալ ստացվել է հարցում, որին գնահատող հանձնաժողովի որոշմամբ, քարտուղարի կողմից 30.09.2024թ. ARMEPS համակարգի միջոցով ներկայացվել է պարզաբանում՝

1. Հարցում՝

«1. ո՞ր բժշկական կենտրոններում է նախատեսված սարքերի տեղադրումը

2. արդյո՞ք տվյալ բժշկական կենտրոններում պատրաստ են սենյակները սարքերի տեղադրման համար»:

Խնդրում եմ տրամադրել պարզաբանում:»

Պարզաբանում՝

«Սարքերը նախատեսված է տեղակայել տարբեր մարզային բժշկական կենտրոններում ըստ սենյակների պատրաստ լինելու և ֆինանսական միջոցների առկայության: Տեղադրման վայրերի առավելագույն հեռավորությունը Երևանից 320կմ, նվազագույնը՝ 60կմ, միջինում՝ 140կմ:»

02.10.2024թ. հրավերի վերաբերյալ ստացվել է հարցում, որին գնահատող հանձնաժողովի որոշմամբ, քարտուղարի կողմից 03.10.2024թ. ARMEPS համակարգի միջոցով ներկայացվել է պարզաբանում՝

1. Հարցում՝

«Համակարգչային տոմոգրաֆ» չափաբաժնի տեխնիկական բնութագրերում նշված «Գենտրիի թեքվածության չափը՝ ոչ պակաս քան +/- 30o» պահանջը վերաբերում է գենտրիի բացառապես միայն մեխանիկական, թե նաև ֆունկցիոնալ, գործառնական թեքվածության չափին:

Պարզաբանում՝

Հարցելի մասնակից:

Առաջարկվող համակարգչային տոմոգրաֆը պետք է ապահովի գենտրիի մեխանիկական թեքվածության միջոցով, կամ ֆունկցիոնալ այլ եղանակով +/- 30o անկյան տակ սկանավորման իրականացում՝ առանց սեղանի վրա հիվանդի դիրքավորման փոփոխության:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

## *6. Ընթացակարգի ամփոփման մասին*

---

***(Ա. Բաբայան)***

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

**Որոշվեց.** «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝ «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն՝ 524,100,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

**Որոշվեց.** «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 12.10.2024թ.-ից մինչև 21.10.2024թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------- Ա. Բաբայան

Անդամներ՝ ---------------------- Վ. Վահանյան

---------------------- Ա. Գևորգյան

---------------------- Հ. Խուրշուդյան

Քարտուղար՝ ---------------------- Հ. Սարգսյան

Մարզային ԲԿ-ների համար անհրաժեշտ համակարգչային տոմոգրաֆիայի սարքերի ձեռք բերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի տվյալները 07.10.2024թ. Հայտերի ներկայացման վերջնաժամկետին

| Հ/Հ | Սարքավորման անվանումը | CPV կոդը | Քանակ | Նախահաշվային | | «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ | | | | | «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Միավորի գին/ ՀՀ դրամ | Գնման գին/ ՀՀ դրամ | Արժեք | ԱԱՀ | Գումար ԱԱՀ-ով | Միավորի գին առանց ԱԱՀ | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար ԱԱՀ-ով | Միավորի գին առանց ԱԱՀ | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | տոմոգրաֆիկ սարքեր | 33111460/503 | 5 | 164,000,000.00 | 820,000,000.00 | 524,100,000.00 | 0.00 | 524,100,000.00 | 104,820,000.00 | 104,820,000.00 | 563,000,000.00 | 0.00 | 563,000,000.00 | 112,600,000.00 | 112,600,000.00 |

Մարզային ԲԿ-ների համար անհրաժեշտ համակարգչային տոմոգրաֆիայի սարքերի ձեռք բերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի տվյալները 07.10.2024թ. Հայտերի ներկայացման վերջնաժամկետին

| Հ/Հ | Սարքավորման անվանումը | CPV կոդը | Քանակ | Նախահաշվային | | «Դիավանտ» ՍՊԸ | | | | | «Ս.Ա.Վ. Գրուպ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Միավորի գին/ ՀՀ դրամ | Գնման գին/ ՀՀ դրամ | Արժեք | ԱԱՀ | Գումար ԱԱՀ-ով | Միավորի գին առանց ԱԱՀ | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար ԱԱՀ-ով | Միավորի գին առանց ԱԱՀ | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | տոմոգրաֆիկ սարքեր | 33111460/503 | 5 | 164,000,000.00 | 820,000,000.00 | 585,000,000.00 | 0.00 | 585,000,000.00 | 117,000,000.00 | 117,000,000.00 | 678,500,000.00 | 0.00 | 678,500,000.00 | 135,700,000.00 | 135,700,000.00 |